

# ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւան 5 ռուբլի  
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

Էմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցիւզի:

Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տարվայ բերքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Բժշկի նշանակութիւնը գիւղերում. Նամակ  
կարգադրութեան. Ներքին լուրեր.—ԱՐ ՏԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արաքսի լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ  
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՒ  
ԲԱԿԱՆ. Իտալիայում:

## ՏԱՐՎԱՅ ԲԵՐՔԸ

Անդրկովկասը այս տարի կուենայ մի-  
ջակ, իսկ մի քանի տեղերում առատ բերք:  
Մանուշակ աճող են բերքի կողմից Կարսի  
և Երևանեան նահանգները: Շիրակը, որ  
անցեալ տարի էլ առատ բերք ունէր և  
վնասվեց երկարատե անձրևներից ու աշ-  
նան ցրտերից, այս տարի աճել է աճող  
կերպով: Եթէ այսուհետե ցրտեր չանեն,  
այն ժամանակ բարձրագոյն տեղերի ցանք-  
ներն էլ, որոնք գեղեցիկ զարգացել են մինչև  
այժմ, կը տան բաւարար հունձ:

Արաքսաբեր գետում, որ երկու տա-  
րի միմեանց վրա վնասվում էր զանազան  
պատահարներից, այն է միջատներից, մեկ-  
ներից, ցրտից և ժանգից, այս տարի  
ազատ է մնացել փորձանքներից, կամ  
այդ փորձանքները այնքան մեծ չեն, որ  
զգալի վնաս հասցնեն արտերին: Պէտք է  
սակայն ցուել, որ ցանքները կատարված  
են սահմանափակ քանակութեամբ այն  
գիւղերում, ուր վտանգ էր սպառնում մի-  
ջատների արշաւանքից, ուստի կարօտ  
գիւղացիների մի մասը զարձեռով անապա-  
հով կը լինի և վերջնականապէս կը կազ-  
մուրթի միայն յետագայ տարիներում, երբ  
նրան կաջողվի իր արտերը մշակել նախկին  
ծաւալով:

Փանձակի և Բագուի նահանգներում  
նոյնպէս հունձը բաւարար է ընդհանրա-  
պէս, բայց առանձին տեղեր վնասվել են  
երաշտից և մորեխից: Թիֆլիսի նահան-  
գում անաջող է եղել Գորու գետում  
բերքը:

Ընդհանրապէս, այս տարին աճող տարի-  
ներից է: Հացի գինը շատ տեղ պակասել  
է և նրա մի մասը կարողանալով ծախելու  
համար: Այժմ բերքը փոքր ինչ ոյժ կը  
տայ մեր գիւղական ազգայնականութեան,  
որ տարիներ շարունակ վնասվում էր ան-  
բերրութիւնից:

## ԲԱՆԱՍԻՒ ԲԱԿԱՆ

## ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թուղթի տպագրութիւններ)

### XIII

Հ. Ալիշանը, միաբանութեան աւագագոյն  
անդամը, որ ընդհանուր յարգանքի եւ խնամ-  
քի առարկան է, այժմ 82 տարեկան է. նա  
վաճելով անց է կացրել 72 տարի, անդուռ ու  
բեղմնաւոր աշխատանքով լի մի կենսւթ, որ  
բնի է մնում դար լինի. սա մի երեւոյթ է, մի  
փաստ, որ մենակ բաւական է պատկառանք  
ներշնչելու գէպի վաստակաւոր միաբանութիւ-  
նը. օտարներն անգամ հիացմունքով են նկա-  
տում այդ եւ այս զարմանալի գործունէութեան  
մէջ հայ ժողովրդի կենսունակութեան, քաղա-  
քակրթական յատկութիւնների մի փայլուն ա-  
պացոյց տեսնում:

Երէկ, վաղ քնալիս, ծովափին սպասող նա-  
ւակի մէջ նստած գտայ հ. Ալիշանին. նա այդ-  
տեղ էլ կարգում էր:

—Հայր նահապետ, քաղաք էք եկել  
—Այս տարի առաջին անգամն է,—եղաւ պա-  
տախտանք:

Այո, հ. նահապետը քաղաք չէ գնում, նա

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԺՇԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԳՐԻԳՈՐՈՒՄ  
(Նամակ Շուշուց)

Տգիտութիւնը անմեղ զոհեր է տանում: Չը-  
կայ բժիշկ, չը կայ ֆելդշեր, չը կայ մանկա-  
բարձուհի: Դրանց փոխարինում են գրքաց-  
ներն ու տգէտ տատները: Դիւղայնիցը  
նախապառն են համարում հիւանդութիւննե-  
րի ժամանակ զիմը գրքացներին ու տատնե-  
րին, քան բժիշկներին ու մանկաբարձուհի-  
ներին:

Եթէ մի օր եւ է գիւղական համայնք ցան-  
կութիւն է յայտնում սեփական բժիշկ ունե-  
նալ, այդ նշանակում է, որ այդ համայնքը  
հասել է որոշ գիտակցութեան, որ բժիշկին  
նոյնքան անհրաժեշտ է համարում, որքան—  
հացը եւ ջուրը: Օրինակ վերջինքը Շուշուցը,  
Աղուիւսը եւ այլ գիւղերը: Այդ գիւղերին ոչ  
ոք չէ ստիպել ունենալ սեփական բժիշկ, այլ  
երանք արել են ինքնաբերաբար: Դա պարզ  
ապացոյց է, որ նրանք վերաբերվել են գի-  
տակցօրէն: Սուրմայուի գետափ գիւղացիները  
հիւանդութիւնների ժամանակ ամենայն ուրա-  
խութեամբ զիմում են բժիշկներին. այդ էլ  
ցոյց է տալիս, որ այդ գետափ զարձեռով հա-  
սել է ինքնաճանաչութեան:

Մեր գիւղացի Շուշու գետափ այլ պատկեր  
է ներկայացնում: Այդ գետափում մինչև այժմ  
գտն է ոչ մի գիւղ ցանկութիւն չէ յայտնել  
սեփական բժիշկ ունենալու մասին: Թաղլար  
գիւղը, որ 500 ծխից աւելի բնակիչներ ունի,  
մինչև անգամ այդ մասին չէ էլ մտածում, այլ  
միայն գիւղական հարցն է ուսով բերում: Երբ  
Թաղլարում սեփական բժիշկ ունենալու մտ-  
օին հարց էինք բարձրացնում՝ ասում էին.  
«Է՛հ այդ բժիշկները ոչինչ չը գիտեն, մեղ վրա  
անգին ծախս կը նստի, ոչինչ էլ չեն անի»:

Մեր գիւղացիները նրանցից լաւ գիտեն բժիշկի  
Միթէ մի գիւղ, որ այդ կարծիքն է յայտնում  
բժիշկի մասին, կը գիմը բժշկական օգնութեան:  
Որ մեր գետափ գիւղացիները չեն գիմում  
բժիշկների օգնութեան, եւ նշանակութիւն չեն  
տալիս, այդ իրողութիւն է: Մենք գիտենք  
բազմաթիւ փաստեր: Ոտքս չերկարացնելու  
համար երբ երեք մի երկուսը: Ահա:

Անցելով 1900 թւին Թաղլար գիւղում կար  
թուէլ հիւանդութիւն, որ օգոստոս ամսին  
էր սկսվել եւ տեւեց մինչև նոյեմբեր: Երկու  
ու կէս ամսվայ ընթացքում այդ գիւղում  
սարսափելի հիւանդութիւնը աւերումներ գոր-

վենետիկի բնակիչ չէ, այլ ս. Ղազարի, ուր նա  
ապրում է իր երեւակայական հայրենիքում, իր  
կարմրիկ Աւարայրում, ուր, աւանդ, զարբը  
անընդհատ թարմացնում են արիւնը, իր Տըղ-  
մուտի ափերում, որ հազար հինգ հարիւր տա-  
րի է՝ էլ վճիռ չէ հոսում, նա ապրում է իր  
զարմանալի խոնրով, որոնք թանձրանում, ծը-  
նունդ են տալիս «Ալարապտի», «Սիւսուկին»,  
«Շիրակին», ուր աւերակների ծուխն աւելի  
թանձր է, քան թխալոտ երկնքի ամպերը եւ ուր  
արցունքն աւելի առատ է, քան ջրաշատ Հա-  
յաստանի աղբիւրների ջրերը: Վաղ առաւօտից  
նա ոտքի վրա է եւ երբեք չը եկեղեցի է գը-  
նում: Երբ միջոցով Շուշուցում «Ջարթիքը» եւ ուշ  
գիշերին անկողին է մանում՝ մրմնջալով իր  
այրված սրտի զեղմունքը:

«Ո՛վ դու ի վաղուց մտոցված հայրենիք,  
Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք...»  
Բայց էլ չըթունքները չեն զօրում ասել...  
Ահա գարունիկը եկել է, հասել...» Մեծ ծն-  
ունուն եւ տեսալ իր սենեակում, ոչ, իր խը-  
ցում. եթէ աչքովս չը տեսնէի նրան իր բնա-  
կայանում, դժուարութեամբ պիտի հաւատայի:  
Եթէ մեր նահապետն է այնտեղ ապրում, այն  
աստիճան պարզ, անպաճոյճ է այդ սենեակի  
ուսքը ու կարգը. ոչ մի տարբերութիւն օո-  
ղորական օարկաւագի սենեակի,—նոյն ան-  
կողինը, նոյն հասարակ աթոռը, նոյն սեղանը,  
աւելին այստեղ միայն զրգերն են: Բոլոր նը-

ծեց, այնպէս որ անմեղ զոհերի թիւը 100-ից  
աւելի էր հաշւում: Հէնց հիւանդութեան սկըզ-  
բում մենք զիմում ենք այդ գիւղի տանու-  
տէրին եւ խնդրում ենք, որ նա գիւղացում  
տայ պատշաճաւոր իշխանութեան գաւառա-  
կան բժիշկ ուղարկելու համար: Սկզբում տա-  
նուտէրը չէ ընդունում, ասելով, թէ բժիշկը  
կը գայ եւ ոչինչ չի անի եւ թէ նրան գիւ-  
ղում պահելը ահագին ծախս կը նստի: Երկ-  
րորդ անգամն եմ զիմում եւ համոզում: Նա  
այդ անգամ գիւղացումը տալիս է պրիտաովին:  
Վերջինս, որ ժամանակաւոր պրիտաովի պաշ-  
տօն էր կատարում եւ ինքը էլ բաւական տգէտ  
մարդ էր, տանուտէրի գիւղացումը իսկոյն չէ  
հասցնում գաւառապետին, այլ բաւական ուշ:  
Վերջապէս գալիս է գաւառական բժիշկը մի  
ֆելդշերի հետ: Նրանք շրջում են գիւղը հի-  
ւանդներին այցելելու: Բայց գիւղացիները ոչ  
թէ հիւանդ երեխաներին ցոյց էին տալիս բը-  
ծիշկներին, այլ աշխատում էին թագցնել նը-  
րանից եւ թագցնում էլ էին (բայցառութիւն-  
ները անշնան էին): Չը նայած բոլոր խրատնե-  
րին թէ բժիշկ, թէ ֆելդշեր եւ թէ աղբիւր  
զրոյր կողմից, նրանք ոչինչ չէին ընդունում:  
Լաց ու չիւանդ գցել էին գիւղը եւ ասում  
էին. «Բժիշկը եկել է, որ մեր երեխաներին  
կտորի»: Անէծքներ էր, որ թափում էին մեր  
գլխներին: Բժիշկը հէնց այդ օրը հագիւ հագ  
մի քանի հիւանդներ այցելելուց յետոյ գնում  
է Շուշու եւ ֆելդշերին թողնում գիւղում:  
Շուշուց բժիշկը գեղեր է ուղարկում եւ ա-  
ռանձին հրամանագրով պատուիրում է հար-  
կաւոր միջոցներ ձեռք առնել հիւանդութիւնը  
թուլացնելու Ամբող մի ամիս, դեռ էլ ա-  
ւելի, ֆելդշերը նստում է Թաղլարում եւ հա-  
մարեա ոչինչ չէ կարողանում անել գիւղացի-  
ների տգիտութեան պատճառով. իսկ այդ ժա-  
մանակ անգութ հիւանդութիւնը իր հունձն էր  
անում:

Մի ուրիշ փաստ: Դարձեալ Շուշու գետափ  
գիւղերից մէկում, որ գտնվում է Շուշու քաղա-  
քից հարիւ 3—4 վերստ հեռավորութեան վրա,  
մի մարդու կէր, երեք տարի արանից առաջ,  
վիժելու ժամանակ տգէտ տատներին իմաստու-  
թիւններից հիւանդանում է ու հազար ու մի  
տանջանքներ կրելով վախճանվում է, եւ մարդը  
բոլորովին չէ զիմում մանկաբարձուհիներից  
մէկին Շուշու, այլ բարւոք է համարում լսել  
միայն «Վալչի»-ներին ու «Գրքաց»-ներին: Ան-  
մեղ զոհին թաղելուց յետոյ, շատ ժամանակ  
չանցած, այդ մարդը բերում է երկրորդ կին:  
Զէ որ տունը, երեխաները չէ կարելի թողնել

րանք, որոնք կրօնական պարզութիւնից, հա-  
մեստութիւնից, առաքելական վարք ու բար-  
քից են խօսում, բայց ճոխ վերադարձների աս-  
տառն էլ ստաւից են կարում եւ իրանց փար-  
թամ սենեակներում քայլում են պարսկական  
փափուկ, թանգապին գորգերի վրա, արժէ, որ  
գէթ մի անգամ այցելեն այս մեծ մարդու բը-  
նական ունենքն, թէ գաղափարի մար-  
դը ինչպէս կարող է կորովի աշխարհի վայելք-  
ներից եւ թէ ինչպէս հնարաւոր է խօսքի եւ  
գործի ներդաշնակութիւնը, երբ առաքելու-  
թեան քարոզները կեղծ շրթունքների մրմունջ  
չեն միայն, այլ ազնիւ սրտի խորքերից են  
բղխում:

Նպասակ չունեն միաբանութեան անդամնե-  
րի բնորոշումը տալ առանձին առանձին. ասա-  
ցի, որ նրանք շատ են նման իրար, իսկ եթէ  
մի քանիսի մասին, հ. Ալիշանից բացի, գրում  
եմ, պատճառն այն է, որ հանգամանքների բը-  
րամբ նրանց աւելի մօտիկից տեսայ:

Միջին սերունդն է ներկայացնում հ. Բար-  
սեղ Սարգսեան, աւելան իւրոր միտքով,  
փոքր հասակով, եռանդուն, գիտական վար-  
դապետը (Շիրակից), որի «Աղաթանգեղոս եւ  
իւր բազմադարեան գաղտնիքը» աչքի ընկնող  
գիտական երկաթաթիւն է եւ արժանի գնա-  
նատութիւն ստացաւ հայագէտ օտարների կող-  
մից, թողնենք նրա բազմաթիւ այլ աշխատու-  
թիւնները, որոնք իրեն մասնագիտական գոր-

անխնամ երկրորդ կինը մի տարուց յետոյ  
աջողութեամբ վիժում է: Բայց հետեւեալ  
ծննդեան ժամանակ այդ բաղդին չէ արժանա-  
նում. նա զարձեռով նոյն տատների թունաւոր  
ձեռքից տանջանքներ կրելով վախճանվում է:  
յետոյ միայն ինձ գիւղացիները պատմեցին, որ  
այդ կնոջ մարդը գնացել է Շուշուց մանկա-  
բարձուհի բերելու, բայց ինչպէս է պատահել՝  
մանկաբարձուհի բերելու մտադրութիւնը փո-  
խել է եւ հրաւիրել է մի տգէտ թուրք աղա-  
մարդի, որը իր գիտութեամբ չէ զանազան-  
վում տատներից: Թուրքը գալիս է եւ մի քանի  
գդալ լուծողական իւղ տալիս հիւանդին:  
Դժբաղդ կնոջը այդ իւղը չէ օգնում եւ նա  
մեռնում է: Պէտք է ասել, որ այդ մարդը ու-  
նեւոր էր, իսկ ինչ կը լինի չունեւոր մարդ-  
կանց հիւանդների դրութիւնը,—այդ ինքներդ  
գտանեցէք:

Այս տեսակ փաստեր՝ որքան կամենաք,—այն  
էլ այն գիւղերում, որոնք գտնվում են Շուշու  
քաղաքի քթի տակ, որտեղից գիւղացիները,  
իւրաքանչիւր հիւանդութեան դէպքում, կա-  
րող են հնչտութեամբ զիմել բժիշկներին կամ  
մանկաբարձուհիներին (խօսքս չբաւարանի  
մասին չէ): Բայց, դժբաղդաբար, ինչպէս տես-  
նում էք վերեւ բերածներից, բժիշկին նշանա-  
կութիւն չեն տալիս իրանց ազգայնութեան  
չորհին:

Հէնց այն ժամանակ, երբ Թաղլարում քու-  
թէլը համաճարակային ձեւ էր ընդունել եւ  
գաւառական բժիշկը գտնվում էր գիւղում,  
գիւղացիները սրբերի, զօրաւոր ծառերի, զըր-  
բայների եւ այլ իմաստակների էին զիմում,  
գիւթիւն խնդրում նրանցից եւ մատաղներ  
խոտանում:

Ոչ, միայն մի եւթ կայ գիւղացուն փրկելու,  
այդ լոյսն է, լոյսը եւ զարձեռով լոյսը:

Համ. կոտանդեանց

## ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Բաղու, օգոստոսի 14-ին

Գէորդ Միրզաբեկեանց, ի յայտանի իր հան-  
գուցեալ զուտուր եղիարեթի, նուիրեց Աղը-  
պատականի թեմին արագաւաղ տպարան, որ  
կրելու է հանգուցեալի անունը: Հրապարակո-  
ւեն յայտնում եմ խորին շնորհակալութիւնս  
օրհնութեամբ հանգերձ:

Թեմակալ առաջնորդ՝ Եղ. Վ. Մուրադեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թիֆլիսի նահանգապետ գնդապետ Սվեյչին

ձեր շատ անգամ յայտնի չեն դառնում ամեն-  
քին: Միաբանութեան երկհարկաւորականի առի-  
թով հ. Սարգսեան պատրաստում է մի նոր  
լուրջ աշխատութիւն, որով պիտի պատկերա-  
նայ ուխտի գործունէութիւնը սկզբից մինչև  
մեր օրերը: Հ. Սարգսեանին դժուար է մի  
վայրկեան պարապ գտնել իր զբօսանքի կար-  
ճատեւ ժամերին անգամ նա անընդհատ կար-  
գում է պարտէզի ծառերի տակ, վաճառում  
միակ վարդապետն է գուցէ, որ ընթացիկ կեան-  
քի վերաբերեալ վէճերում չուտուր տեղի տա-  
լու սովորութիւնը չունի, այս պատճառով նրա  
հետ խօսակցութիւնը միշտ ընդունում է կեն-  
դանի, հետաքրքիր կերպարանք:

Երիտասարդ վարդապետներն մէջ ինձ վի-  
ճակվեց տեսնել խնամ համակրելի տիպեր, ո-  
րոնք մեծ ապագայ են խոտանում: Հ. Թորո-  
սեան, վաճական լիցեօնի տեսուչը միանգա-  
մայն եւ ուսուցչապետ, մի աչքի ընկնող անձ-  
նաւորութիւն է, թէ իր լայն կրթական պատ-  
րաստութեամբ եւ թէ իր վերին աստիճանի  
համակրելի արտաքինով եւ ազնուական ձեւե-  
րով: Քիչ անգամ է վիճակվել ինձ տեսնել  
մի կրօնաւոր, որ այնքան յիշեցներ մեր V  
դարի թարգմանիչներին, այնպէս ինչպէս  
մեր երեւակայութեան հանելիք է լինում պատ-  
կերացնել նրանց: Բարձրահասակ սիրուն մի  
աղամարդ, արեւելեան չնչնով գիմազներով,  
սեւ երկայն փառահեղ միտքով եւ նազելի



ուղեւորակ Ախալքալաքի գաւառը՝ նայելու  
այն չինութիւնները, որոնք կառուցանվում են  
այնտեղ երկրաշարժից վնասված աղգարանակու-  
թեան համար:

Կիրակի, օգոստոսի 12-ին Թիֆլիսում բարձ-  
րացաւ սաստիկ քամի, որից զգալի կերպով  
իջաւ օդի տաքութիւնը: Մեզ հասած տեղե-  
կութիւններէն երեւում է, որ նոյն օրը սաս-  
տիկ քամի է եղել Ալեքսանդրօպոլսում, Կար-  
սում, Մանգլիսում եւ ուրիշ տեղերում: Քամին  
թեթեւ կերպով շարունակուեց էր եւ հետե-  
ւեալ օրը: Սաստիկ չոգերից յետոյ այդ քամին  
մեղմացրեց օդի ջերմութիւնը: Թիֆլիսում  
ջերմաչափը գիշերը իջաւ 16—17° ըստ Բե-  
մսթերի:

Կովկասեան ցուցահանդէսի վարչութիւնը  
միջնորդութիւն էր յարուցել հաղորդակցու-  
թեան ճանապարհներ միմիատրութեան առաջ  
եւ խնդրել էր թոյլ տալ Անդրկովկասեան եր-  
կաթուղիներէ վարչութեան մասնակցելու Կով-  
կասեան ցուցահանդէսին Այժմ յիշված մի-  
միատրութիւնից ցուցահանդէսի կոմիտայի ա-  
նունով ստացված է հետեւեալ հեռագրական  
պատասխանը. «Հաղորդակցութեան ճանա-  
պարհներ միմիատրութեան յանձնարարու-  
թեանը հաղորդում է ձեզ, թէ պ. մի-  
միատրը, որ խիստ համակրում է Կովկասեան  
ցուցահանդէսի աշոգութեանը, կարգադրեց, որ  
Անդրկովկասեան երկաթուղիներէ կառավարիչ-  
ներից անհրաժեշտ տեղեկութիւնները ստանա-  
լուց յետոյ՝ միմիատրութեան մէջ նորից քննվի  
այդ ճանապարհների մասնակցութեան հարցը  
Կովկասեան ցուցահանդէսին»:

Դարաշիջագից մենք ստացանք մի քանի  
բողոքներ «Մշակ» № 170-ի մէջ ստված այն  
լուրի դէմ, որ Դարաշիջագում յուլիսի 20-ին,  
իբրեւ թէ, հոգեհանգիստ է կատարվել Գրի-  
գոր Զանչեանի յիշատակին եւ նոյն օրն էլ  
կայացել է գրական երեկոյթ՝ հանգուցեալի  
յիշատակին: Բանից զուրա է գալիս, որ ոչ  
հոգեհանգիստ է կատարվել, ոչ երեկոյթ է  
տեղի ունեցել եւ մենք զո՞նք ենք դարձել մի  
անպատկառ միտոֆիկոցիայի: Փաստը, աը-  
խուր, անպատկառ փաստը այն է, որ նոյն  
իսկ ամենքի համար մի շատ յարգելի հանգու-  
ցեալի յիշատակի հետ կապել են ինչ որ ստոր  
դիտումներ: Մենք ամաչելով ենք արձանա-  
գրում այս երկուցորդ իրերն. նմա՞նք մեր  
սատիկան վայրենի բարքեր եւ ներողութիւն  
ենք խնդրում յիշեալ լուրի մէջ անուանված  
օրորդներից եւ պարոններից, որոնք որպէս  
թէ եկեղեցում եւ երեկոյթին ճանք են խո-  
սել եւ ոտանաւոր են կարգադրել. ոչ մի իմ-  
բաղութիւն, որքան էլ զուգուցեամբ վերա-  
բերվի իրան հասնող լուրերին, չէր կարող  
ենթադրել թէ խաբէրայութեան զո՞նք դարձած  
կարող է լինել մի այսպիսի դէպքում: Մի  
քանիները ուղարկել են մեզ նամակներ եւ  
խնդրում են տպագրել, թէ իրանք չեն այդ  
լուրի հեղինակները: Այդ նամակները չը տպա-  
գրուել, ինչպէս նաեւ տեղի եւ ամօթալի գոր-  
ծերով պարագողին պատժելու համար հա-  
ղորդում ենք որ Դարաշիջագի վերոյիշեալ

լուրը մենք ստացել ենք մի քանի նամակի վրա,  
մի ոմն Գ. Իսահակեանից:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Կիրա-  
կի, օգոստոսի 12-ին, ս. Աստուածածնի տօնի  
առիթով, Թիֆլիսի Բէթղէնէմ եկեղեցում պա-  
տարագում էր կոնսիստորիայի նախանշամ, ս.  
Սարգսի վանահայր եւ «Արարատի» խմբագիր  
Գարեգին վարդապետ Յովսէփեան: Հայր-մե-  
րից» առաջ հայր սուրբը դարձաւ ժողովրդին  
եւ սկսեց քարոզ խօսել: Որ հայր սուրբը չու-  
նի քարոզելու ընդունակութիւն, այդ ապա-  
ցուցեց նա այսօրվայ խօսելով՝ իր գոռում-  
զոռումներով, իր անտեղի շարժումներով:  
Սակայն այդ դեռ ոչինչ: На нѣтъ и сѣдѣ  
нѣтъ. Գլխաւորն այն էր, որ քարոզիչ հայր  
սուրբը իր շանթերը ուղղում էր ինչ որ  
աներեւոյթ թշնամիներ, երեւի ազատամիտ-  
ների դէմ, այդ պատճառով էլ նա բայցըր գործ  
էր անում երրորդ դէմքում եւ ժամանակ առ  
ժամանակ բացականչում էր. «Թող հասկանան  
վերջապէս այդ տարրական ճշմարտութիւնը»,  
«Թող խելքի դան դրանք», «մեր ս. եկեղեցու  
երդեւալ թշնամիները», «պոստամախանները» եւ  
այլն: Ի՞նչ էր քարոզի միտքը եւ ինչի մասին  
էր ուղում խօսել հայր սուրբը, ոչ ոք ոչինչ  
չը հասկացաւ. նոյն իսկ ինքը քարոզիչը իր  
համար պարզ չէր որոշել իր ասելիքը: Փոխանակ  
գոռում-զոռումի, փոխանակ այդ զոնքիտակաւ  
կուր, լաւ չէր լինի, որ հայր սուրբը նախ  
բացատրէր օրվայ տօնի նշանակութիւնը եւ  
երկրորդ՝ հասկացնէր, թէ որն է իսկական հա-  
ւատը եւ որն է սնտիապաշտութիւնը, որոնց  
մասին նա միայն ակնարկեց ասելով թէ՛ «հա-  
ւատը ամեն մարդու բանն է, նա մէկ մատչե-  
լի է հասարակ ժողովրդին, մէկ էլ լուսաւո-  
րութեան գազաթնակէտին հասած մարդուն»  
(օրինակի համար գնաց Անգլիա): Այդ ժամանակ  
ժողովրդից մէկը բացականչեց «բայց մենք հէ՛  
լէի, հայր սուրբ»: Երբ ասում են, որ մեր քա-  
րոզիչները չեն կարողանում օգտվել առիթից,  
չեն կարողանում քարոզի համար այնպիսի  
նիւթ ընտրել, որով կարողանան ժողովրդին  
հետաքրքրեցնել, որ նրանք քարոզում են,  
կամ հեղոյ անմահութեան» կամ «հաւատոյ  
խորհրդաւոր նշանակութեան» մասին, նրանք  
մէջնեկից կէս են լինում հակառակը ապացու-  
ցանելու:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎԻՑԻ մեզ գրում են. «Մար-  
դապետութիւնը օր օրի վրա շատանում է  
մեր քաղաքում: Երէկ, օգոստոսի 11-ին ան-  
յայտ շարագործները սպանել են հայ-կաթ-  
իկների եկեղեցու պարտիզանին պարազի  
մէջ: Հանգուցեալը գիւղացի էր 35 տարեկան,  
ունէր 3 որդեր»:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

— «Rappel» լրագրի ասելով, գիւղամատի-  
կան չրջաններում հաւատացնում են, թէ սու-  
թան Արշիւ-Համիդ ժողովրդին ունի կարճ  
ժամանակից յետոյ այցելել Ռուսաստան: Մահ-  
մադականները դէմ են սուլթանի այդ ժողովու-  
թեան, որովհետեւ, նրանց կարծիքով, մարգա-

րէի յաջորդը կարող է այցելել օտար երկիրները  
միայն որպէս տիրապետող: Բայց չը նայելով  
այս կարծիքին, եղել է դէպք, երբ սուլթանը  
այցելել է օտար երկիրներ, այսպէս սուլթան  
Արշիւ-Ազիզ 1867 թին մի ճանապարհորդու-  
թիւն կատարեց Եւրոպայում:

—Մոտ օրերումս տեղի ունեցաւ Իշլում  
Ֆրանց-Յովսէփ կայսրի եւ Գոլուսովի, Կէր-  
բէր ու Կալայ միմիատրների մէջ մի նշանաւոր  
խորհրդակցութիւն, որ վերաբերում էր զխա-  
ւորապէս զինուորական գործերին եւ օրի մէջ  
քննադատվեցին բալկանեան թերակղզու մասն  
պետութիւններէ մէջ տիրող յուզմունքից  
սպասելի հետեւանքները: «Magyar Hirlap»  
լրագրի ասելով, ամենամանրամասն տեղե-  
կութիւններ տալիս էր Կալայ, որպէս  
արեւելքի գործերին քաջ տեղեկ անձն:  
Նա ժողովի ուշադրութիւնը հրաւիրեց Սեր-  
բիայի վրա, որ վերին աստիճանի թշնա-  
մարար է վերաբերվում դէպի Աւստրո-Ունգա-  
րիան Ասում են, թէ խորհրդակցութեան հե-  
տեւանքն եղել է այն, որ որոշվել է աւստրո-  
ունգարական զորամարտնեցներ կատարել այս  
տարի սերբական սահմանին մօտ: Կոմս Գոլու-  
սովիկի առաջարկեց միջոցներ ձեռք առնել  
Բոսնիա-Էրնոօգրական սահմանի վրա:

—Հետզհետէ աւելի եւ աւելի հաստատվում  
է այն լուրը, թէ Սերբիայի, Բոցարիայի եւ  
Չերնօգորիայի մէջ կապված է դաշնակցու-  
թիւն: Եթէ Բալկանեան թերակղզում պատա-  
հան անակնկալ բարդութիւններ, այդ երեք  
պետութիւններն եւս պէտք է գործեն միասին:  
Նրանք կը զինակցեն Ռուսաստանին: Գոնէ  
այսպէս է գրում գերմանական «Münchener  
Neueste Nachrichten» լրագրեր: Գերմանական  
լրագրի այս տեղեկութիւնը հաստատում են եւ  
սերբական լրագիրները: Նրանք հաղորդում են,  
թէ Ալեքսանդր թագաւորը կուղեւորվի Պե-  
տերբուրգ հոկտեմբերի վերջին եւ ապա այս-  
տեղից ճանապարհ կընկնի դէպի Հոսո իտա-  
լական կայսրի հետ տեսակցելու համար: Հոս-  
ում Ալեքսանդր թագաւորը կը հանդիպի  
Չերնօգորիայի իշխան Նիկոլային եւ նրանց եւ  
իտալական թագաւորի մէջ տեղի կունենայ  
շատ կարեւոր խորհրդակցութիւն: Բալկանեան  
թերակղզու դաշնակից պետութիւնների ապա-  
գալ գործունէութեան վերաբերմամբ:

### «ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԻՍԿԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ  
11 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ Օգոստոսի 11-ին Թագուհի  
Կայսրուհի Մարիա Ֆելոգորովնա բարեհաճեց  
մեկնել իր օգոստոսական եղբայր պրինց Վալդե-  
մարի եւ նրա ամուսնու հետ Դանիա:

Օգոստոսի 10-ին Թագաւոր Կայսրը, Մեծ-  
Իշխանը Վալդիմիր Ալեքսանդրովիչ, Կիրիլ  
Վալդիմիրովիչ, Ալեքսէ Ալեքսանդրովիչ եւ Մի-  
խայիլ Նիկոլայովիչ, զինուորական միմիատրի,  
ծովային միմիատրութեան կառավարչի, Պետե-  
րբուրգի զինուորական շրջանի շտաբի կառա-  
վարչի եւ ուրիշների ուղեկցութեամբ այցելե-  
ցին Միխիլ տին՝ մարտկոցը, որ Նորին Մեծու-  
թիւնը մանրամասնօրէն դիտելից Մարտկոցից  
թագաւոր Կայսրը նայում էր այն հրաձգու-  
թեանը, որ արեւմտեան կորպուսի նաւատորմը  
բացել էր կրօնշտապի հիւսիսային ֆարվա-  
տէրի դէմ, եւ պիւրօկեմիլի ականի պայթմանը  
հարաւային ֆարվատէրում: Ապա շոգեշարժ  
նաւակով Թագաւոր Կայսրը ուղեւորվեց դէպի  
Ֆինլանդի ծոցի հարաւային ափերի բաւարէա-

ները եւ նրանց դիտելուց յետոյ, վերադարձաւ  
«Ալեքսանդրի» զբոսանաւը, որով եւ ճանա-  
պարհ ընկաւ Պետերսհոֆ: Թնդանութեան կուրը  
կրօնշտապի մարտկոցների եւ փոխ-ծովայե-  
րօժեստիկներու նաւատորմի մէջ մի քանի  
անգամ վերանորոգվեց Երկր ընթացքում: Կուրի  
մասնակցում էին եւ ծովափնեայ բաւարէա-  
ները:

ՊԱՐԻԶ. «Հաւասի գործակալութեան» կող-  
մից հաղորդված տեղեկութեան մէջ ասված է,  
թէ Կ. Պօլի ֆրանսիական զեապանի յայտա-  
բարութեան պատճառով, որ նա յայտնեց Բ.  
Դրանը արտաքին գործերի միմիատրի հրամա-  
նով, հրատարակված է իրադէ, որով պատուի-  
րում է արգելքներ չը հանել այսուհետեւ նա-  
ւարանների եւ ծովափերի ընկերութեան ա-  
ռաջ եւ թող տալ այդ ընկերութեանը օգտվել  
այն իրաւունքներից, որոնք ըլլում են ար-  
տօնագրերից: Սպասում են, որ միւս հարցերն  
եւս անյապաղ կը կարգադրվեն:

12 օգոստոսի  
ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲԻՐԼԷՏԻՆ Մեծ Իշխանուհի  
Կսենիա Ալեքսանդրովնայի առողջական դրու-  
թեան մասին օգոստոսի 10-ից, «Մեծ-Իշխա-  
նուհի Կսենիա Ալեքսանդրովնա, լաւ ինքնա-  
զգացութեան եւ ոյժերի արագ կազուրուման  
հետ միասին, գտնվում է առողջութեան Նորին  
Բարձրութեան Իշխան Դմիտրի Ալեքսանդրովի-  
չի ընդհանուր առողջական դրութիւնն եւ  
անդառուութիւնը կատարելապէս զոհացուցիչ է:  
Հրատարակված է Բարձրագոյն հրաման, ո-  
րով հոգեյին բանկերի գործառնութիւնները  
տարածվում են Թուրքեստանի քաղաքներից  
զուրա գտնվող հողերի վրա:

Հրատարակված է ներքին գործերի միմիատ-  
րի շրջաբերականը նահանգապետներին, քա-  
ղաքապետներին եւ աւազ-ստիկանապետներ-  
ին, որով հրահանգներ են տրվում տեղական  
իշխանութիւններին, թէ ինչպէս պէտք է վար-  
վել հրապարակական ներկայացումների, կու-  
ցերանների եւ ուրիշ բարեգործական նպատակ-  
ներով արվող զբոսանքների թոյլտուութիւնը  
տալիս:

ՊԱՐԻԶ. Ամբողջ ֆրանսիական աղգարանա-  
կութիւնը աննկարագրելի ուրախութեամբ ըն-  
դունեց Ռուսաց Կայսրի այցելութեան լուրը  
դէպի Ֆրանսիա: Լրագիրների ասելով՝ նախա-  
գահը հակամեծ է ներումն չորհելու գերա-  
զոյն դատարանի կողմից դատապարտվածնե-  
րին:

ՎԻԵՆՆԱ. «Politische Correspondenz» հա-  
տատում է, որ Ռուսիական պրինց Ֆերդի-  
նանդ, Ֆրանց-Յովսէփ կայսրի հրաւերով, ներ-  
կայ կը լինի աւստրո-ունգարական գործի մար-  
դանքներին, որոնք տեղի կունենան հարաւ-  
արեւմտեան Ունգարիայում: Պրինցին կուղեկցե-  
ղիւսուր շտաբի գնդապետ Ալեքսէն:

ՊԱՐԻԶ. Հաւասի գործակալութիւնը՝ հա-  
ղորդում է, թէ Ռուսաց Կայսրը, ընդունելով  
նախագահ Լուրէի հրաւերը, ներկայ կը լինի  
զօրախաղերի վերջին Բէյմի մօտ Դիւնկիր-  
խէն գալուց առաջ, Նորին Մեծութիւնը Լուրէի  
հետ միասին ներկայ կը լինի հիւսիսային նա-  
ւատորմի նաւահանդէսին, որին յանձնարար-

քայլուածքով մի կրօնաւոր, որի բոլոր շարժում-  
ները, խօսքի իւրաքանչիւր դարձուածքը, յայտ-  
նած իւրաքանչիւր միտքը հեղութեան կնիք են  
կրում իրանց վրա: Նա գիտէ եւրօպական բո-  
լոր ժամանակակից գիտաւոր լեզուները ինչպէս  
նաեւ կլասիկականները, վանքից զուրա իր ու-  
սումը կատարելագործել է, եթէ չիմ սխալվուի, Է  
Հոսում են Գերմանիայում, ինչպէս նաեւ Հ.  
Սարգիս: Սրբաբիր բարեմտութեամբ առաջնոր-  
դեց ինձ իր խնամքին յանձնած լիցէնզի եւ  
ժանօթացրեց իր սաների հետ, տասնի չափ  
հայաստանցի երիտասարդներ, որոնցից մի քա-  
նիսը իմ այնտեղ եղած ժամանակ ուխտի մէջ  
մտան:

«Բազմավէպի» խմբագիրն է Հ. Սիմէն Երե-  
մեան, չիկաներ երիտասարդ վարդապետը, ամե-  
նից աւելի մօտիկ ծանօթ Ռուսահայ արդի գրա-  
կանութեան եւ գործիչներին, զուցէ չորհիւ  
իր պաշտօնի Այդ ամբողջ թերթը, մասնաւոր  
գործի տեխնիկական մասը համարեալ մենակ է  
վարում. եւ նրան գտաւ իր խցում, երբ մե-  
նակ համարներն էր ծրարում եւ նամակա-  
նիշներ փակցնում: Հ. Երեմեան համեմատա-  
բար նոր մարդ է եւ աշխատում է իր զեկա-  
վարութեան յանձնված թերթին մի փոքր ժա-  
մանակակից զոյն տալ, զովիկ ձգտում, որ  
որքան աշողվի, նոյնքան հետաքրքիր պիտի  
դարձնի գործը եւ նոյնքան յարգելի իր խմբա-  
գրին, իսկ զրա համար անհրաժեշտ է «Բազմա-

վէպից» իսպառ դուրս ձգել թիրազայերին յա-  
տուկ քննադատական այն մեթոդը, որ իրենի  
արժէքը որոշելու չափը շատ առաձգական է,  
եւ, միւս կողմից, ցաւալի երեւոյթները պէտք  
չէ հեռաւոր, մեղմ ակնարկներով յայտնել, այլ  
անուռ-անուռ եւ դանդաղ չեղտով, այսպէս  
ընդհանուր խօսքերը անցնում են առանց խոր  
հետք թողնելու:

Տպարանի տեսուչն է Հ. Սարեան, որ առա-  
ւօտից երեկոյ իր պաշտօնատեղից չէ հեռանում:  
Նրան կարելի է տեսնել մերթ շարողի մօտ,  
մերթ օրբարութեամբ զբաղված, մերթ իր  
անվերջ հալիւներով: Տպարանում է նոյնպէս  
Հ. Սուքիան Էփրիկեան, «Բնաշխարհիկ բառա-  
րանի» հիմաւ հեղինակը: Մշտական խոնու-  
այդ բոլորովին երիտասարդ մարդը՝ Ծերունու-  
լիւթիւնն է կրում իր վերին աստիճանի հա-  
մակրելի դէմքին. նա այնպէս մտազբաղ է, որ  
կարծես տարված է մի մեծ պրօբլէմով, որի  
վերջը նրա համար կենսական նշանակութիւն  
ունի. այդ պրօբլէմը իր սկսած մեծ դիտական  
գործն է, իր բառարանը, որի համար աշխա-  
տում է անդադրում. նրան տեսնելիս ինձ միշտ  
թւում էր, թէ մի նոր բան է գտել, որ վա-  
ղում է շտապով գրի առնելու:

Հ. Եսայի Տաշիցին, լրջաթիւրիւնը, յաղթան-  
գած մի տղամարդ, ինչ որ լինական բան է  
բերել իր հետ Տաշից լինելից. նա՝ անխնայ գրա-  
դարանապետ է. սիրալիք պատրաստակաւու-

թիւնը, որով նա աշխատում է գոհացնել գրա-  
դարանում զբաղվող հիւրերին, վկայում է  
նրա բուն արեւելեան, բուն չայկական, աւելի  
կանոն հայ գեղղիական հիւրասիրութիւնը:

Յերեկվայ ուղիղ 12 ժամին բոլոր միաբան-  
ները եկեղեցի են իջնում աշակերտների հետ.  
դասում, սեղանի առաջ ալ ու ձախ տեղ են  
ընում աշակերտները, որոնք մի եւ նոյն ժա-  
մանակ երգիչներն ու փոխասպետներն են, իսկ  
նրանցից ներքեւ, դասը բաժանող վանդակա-  
պատի առաջ, միաբանները: Սկսվում է ճաշու-  
թամերգութիւնն իր անվերջ ճողորմաներով,  
որ քաղում են ցածր ձայնով, բայց արագ-արագ  
ժամերգութիւնից անմիջապէս յետոյ դիմում  
են դէպի սեղանատուն. ամենքը հաւաքվում են  
սեղանատան նախասենյակում՝ սպասելով ար-  
բաժորը, որը շուտով յայտնվում է, ողջօյն է  
փոխանակվում, նա առաջ է անցնում, միւս-  
ները հետեւում են եւ լուծութեամբ գրաւում  
իրանց տեղերը: Արբանային օրհնում է սեղանը  
մի բաւական երկար օրհնութեամբ, որ լուծւո-  
ւում յոտնկայաւ, ապա նստում են եւ սկսվում է  
ճաշը կատարել լուծութեան մէջ. միայն լուծւո-  
ւում է մի աշակերտի ձայն, որ վերնատնից կար-  
գում է ս. գիրքը: Միթիթարանների ճաշը  
նոյնպէս ուշադրաւ է. ինչ ասել կուզի, որ վա-  
նական ճաշ է, ճոխութիւնից շատ հեռու, բայց  
զրա հետ միասին՝ մաքուր է, անշարժար  
սխորժելի: Ծախից յետոյ նոյն կարգով դուրս

են գնում, դարձեալ սպասում արբաժորը նա-  
խասենակում, որի հետանալուց յետոյ յետ են  
գալիս սեղանատան իրանց մի-մի բաժակ  
տուրք խմելու: Ինձ թւում է, որ Միթիթարա-  
նների սուրճի այդ կարճատեւ ժամը նրանց  
կիանքի ամենատախա, ամենահաճելի ժամերից  
մէկն է. այդ ժամանակ է, որ նրանք ուրախ-  
ուրախ խօսում են, կատակներ են անում, մի  
խօսքով զուարճանում, ինչպէս որ կարելի է  
զուարճանալ ս. Ղազարում: Քիչ յետոյ այլ  
եւ ոչ ոք չէ երեւում ոչ սեղանատանը, եւ  
ոչ պարտէզում. լուծութիւնը տիրում է չորս  
կողմում եւ աշխատանքը վերսկսվում է, եւ  
այսպէս օրեր ու տարիներ, այսպէս ամբողջ  
կեանքը:

Միւրում եմ հաւատալ, որ հոշակաւոր մենա-  
ստանի երկհարկաւոր տարեդարձին հայ  
ժողովուրդը ցոյց կը տալ, որ գիտէ գնահատել  
այս վաստակաւոր մարդկանց անձնուրու-  
թիւնը, գիտէ վարձատրել արժանիքը, քաջա-  
լիքի եռանդը: Միթիթարան միաբանութիւնը  
երբեք ձեռք չէ մեկնել եւ նա երբեք էլ չի  
մեկնի, բայց նրան յանձնված իւրաքանչիւր  
լուծում միշտ հայ ժողովրդի փառքին եւ նրա  
վերահմուտները գործին է ծառայել եւ, յու-  
սանք, կը ծառայի: Այս չը պէտք է մոռանալ:

Ա. Անարոնեան







Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванковская ул.